ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Հայաստանում ներդրումների, թվայնացման, աճի և ձեռնարկատիրության համար բիզնես կարգավորումների բարելավում (Armenia BRIDGE)



Իրականացման ժամանակահատված: 25.11.2025 - 31.05.2029

ԱլԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 2 900 000

Ընդհանուր բյուջե: € 2 900 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

The World Bank

Նախագծի նկարագրություն:

Armenia BRIDGE նախագիծը աջակցում է Հայաստանի կառավարությանը երկրի բիզնես միջավայրի բարելավման գործում՝ արդիականացնելով բիզնեսի ստեղծման, գործունեության և փակման գործընթացները կարգավորող հիմնական իրավական, կարգավորող և ինստիտուցիոնալ համակարգերը: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից: Ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել ժամանակակից ընկերությունների մասին օրենք, ստեղծել տվյալների վրա հիմնված և թվային ընկերությունների ռեգիստր, բարեփոխել բիզնեսի լիցենզավորման ընթացակարգերը, ամրապնդել մրցակցության քաղաքականությունը և արդիականացնել ներդրումների մասին օրենսդրական դաշտը:
Այս փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ավելի մեծ իրավական հստակություն և թափանցիկություն, պարզեցնել վարչական գործընթացները և նվազեցնել բիզնեսի համար առկա կարգավորող խոչընդոտները: Ինստիտուցիոնալ կարողությունների և թվային պետական ծառայությունների զարգացման միջոցով նախագիծը կնպաստի ավելի կանխատեսելի և մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանը, ներդրումների ներգրավմանը, ինչպես նաև մասնավոր հատվածի կայուն զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը Հայաստանում:

Ակնկալվող արդյունքներ:

1. Բիզնես միջավայրի բարելավում՝ ժամանակակից և թափանցիկ «Ընկերությունների մասին» օրենքի ներդրման շնորհիվ:
2. Թվային պետական ծառայությունների զարգացում՝ տվյալների վրա հիմնված և նոր իրավական շրջանակին համապատասխան գործող թվային ընկերությունների ռեգիստրի միջոցով:
3. Պարզեցված և ռիսկերի վրա հիմնված լիցենզավորման համակարգի ներդրում, որը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին և միաժամանակ ապահովում է հանրային շահի պաշտպանությունը:
4. Ավելի արդար և մրցունակ շուկայի ձևավորում՝ ազգային նոր մրցակցային քաղաքականության կիրառմամբ: Ներդրումային միջավայրի ամրապնդում՝ միջազգային չափանիշներին համապատասխան արդիականացված ներդրումների մասին օրենքի շնորհիվ: